

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**ԱՆԿԱԿ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՎՃԱՐԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունները,  
այսուհետ՝ Կողմեր,

համարելով Վճարային միության եւ վճարումների արդյունավետ համակարգի ստեղծումը անհրաժեշտ պայման Տնտեսական միության Նորմալ գործունեության համար, պայմաններ ձեւավորելով ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժի համար, ձգտելով առեւտրատնտեսական հարաբերությունների հավասարակշռվածության ապահովմանը, Նպաստելով փոխշահավետ կոոպերացիոն եւ այլ տնտեսական կապերի հիման վրա ազգային տնտեսությունների տնտեսական ներուժի աճին,

հաշվի առնելով ժողովուրդների սերտ պատմական եւ մշակութային կապը,  
պայմաններ ստեղծելով փոխհաշվարկների օպտիմալ համակարգի փուլային կառուցման համար, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

**ՀՈՂՎԱԾ 1**

Ստեղծել Վճարային միություն Կողմերի կամավոր միավորման միջոցով հաշվարկների անխափանության ապահովման նպատակով ազգային արժույթների փոխադարձ փոխարկելիության օգտագործման ռեժիմում եւ դրա հիմքի վրա վճարային համակարգի ձեւավորումը:

Վճարային միության ստեղծումը Կողմերը դիտում են որպես փուլային գործընթաց եւ ձեռնամուխ են լինում դրա իրագործմանը երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրեր կնքելու միջոցով:

Հաշորդ փուլում Կողմերը կարող են իրականացնել միջոցառումներ հավաքական արժույթով հաշվարկների բազմակողմ համակարգի ստեղծման ուղղությամբ:

**ՀՈՂՎԱԾ 2**

Վճարային միության ձեւավորումը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

ազգային արժույթային ինքնիշխանության եւ Կողմերի կենտրոնական (ազգային) բանկերի դերի ճանաչումը Կողմերից յուրաքանչյուրի տարածքում որպես դրամավարկային էմիսիոն կենտրոններ եւ դրամավարկային եւ արժույթային կարգավորման մարմիններ,

Կողմերից յուրաքանչյուրի տարածքում կոնտրակտներով նախատեսված առեւտրային եւ ոչ առեւտրային գործողություններով որպես վճարման միջոցներ ազգային արժույթների ընդունման եւ օգտագործման որեւէ սահմանափակման անթույլատրելիություն,

պետական արտաքին առեւտրային եւ արժույթային կարգավորման կանոնների սահմանում, որոնք Կողմերից յուրաքանչյուրի տարածքում նպաստում են լիարժեք (լիկվիդային) արժույթային շուկայի զարգացմանը ազգային արժույթի մյուս Կողմերի ազգային արժույթների եւ այլ արժույթների առուվաճառքի գործողություններով,

սոցիալապես նշանակալի վճարումներով այլ Կողմերի արժույթներով ազգային արժույթի երաշխավորված փոխարկելիության ապահովումը՝ կենսաթոշակների, ալիմենտների, պետական նպաստների, մուծումների եւ փոխհատուցումների փոխանցումը, ներառյալ աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությունը այլ կերպ վնասած աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարումները, դատական եւ քննչական մարմինների վճիռների, որոշումների, սահմանումների հիման վրա վճարվող գումարները, քաղաքացիների մահվան հետ կապված վճարումները, քաղաքական ճնշումների զոհերին, նրանց ընտանիքների անդամներին եւ ժառանգներին դրամական

փոխհատուցումները եւ ծախսերի փոխհատուցումը դատական, քննչական, արքիտրաժային, նոտարական եւ այլ իրավապահ մարմիններին,

լիազորված առեւտրային բանկերին արտաքին տնտեսական գործողություններով հաշվարկներ իրականացնելու իրավունքի տրամադրում, վարկեր տրամադրել թղթակցային բանկերին եւ արտաքին տնտեսական գործողությունների մասնակից այլ ոչ ռեզիդենտներին,

վճարումների արժույթի որոշման մասով վարչական սահմանափակումների անթույլատրելիություն Կողմերի տնտեսվարող սուբյեկտների միջեւ կոնտրակտներ կնքելու դեպքում,

ոչ ռեզիդենտներին ազգային արժույթ տիրապետելու եւ Կողմերի շրջանակներում ապրանքների ու ծառայությունների դիմաց վճարման, ոչ առեւտրային բնույթի վճարումների համար այն օգտագործելու հնարավորության տրամադրում:

### ՀՈՂՎԱԾ 3

Վճարային միության հիման վրա ձեւավորվող վճարային համակարգը սպասարկում է հաշվարկները.

ապրանքաշրջանառության հետ կապված միջպետական եւ ձեռնարկատիրական ոլորտներում,

ոչ առեւտրային գործողությունների հետ կապված,

տրանսպորտի, կապի եւ այլ ճյուղերում ծառայությունների հետ կապված,

պետական, բանկային, առեւտրային վարկերի հետ կապված,

փոխանակման (կոնվերսիոն) արժույթային գործողությունների հետ կապված,

Կողմերի բանկային համակարգերի միջոցով կանխիկ արժույթի գնման (վաճառքի) հետ կապված:

Վճարային համակարգի մասնակիցներն են.

Կողմերի Կառավարությունները՝ նրանց միջեւ կնքված երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերով,

կենտրոնական (ազգային) բանկերը, որոնք ապահովում են վճարային համակարգի գործունեությունը, արժույթային կարգավորման նորմերի եւ կանոնների մերձեցումը, առեւտրային բանկերը, որոնք կենտրոնական (ազգային) բանկերի կողմից լիազորված են օտարերկրյա արժույթով գործողություններ կատարելու,

Միջպետական բանկը, որը հանդիսանում է Վճարային միության մասնագիտացված հաստատություն եւ իրականացնում է հաշվարկներ կենտրոնական (ազգային) բանկերի միջեւ բազմակողմ քլիրինգի հիման վրա, գործողություններ է կատարում Կողմերի արտարժույթային շուկաներում, վարում է տվյալների բազան՝ Կողմերի կենտրոնական (ազգային) եւ այլ բանկերի տեղեկատվական ապահովման համար, ի շահ Վճարային միության կատարում է այլ գործառնություններ,

տնտեսվարող սուբյեկտները՝ իրավաբանական անձինք եւ առանց իրավաբանական անձ կազմավորելու իրենց գործունեությունը իրականացնող ձեռնարկատերերը,

Ֆիզիկական անձինք՝ Կողմերի ռեզիդենտները ոչ առեւտրային գործողություններ կատարելուց:

### ՀՈՂՎԱԾ 4

Որպես վճարման արժույթ վճարային համակարգի մասնակիցները իրենց ընտրությամբ կարող են օգտագործել Կողմերի ազգային արժույթները կամ այլ արժույթներ:

Միջազգային հաշվարկները իրականացվում են կենտրոնական (ազգային) եւ լիազորված առեւտրային ու այլ բանկերի թղթակցային հաշիվների միջոցով:

Վճարային համակարգի մասնակիցները կարող են մյուս Կողմի ազգային արժույթով դրամական միջոցներ տեղավորել նրա ներքին դրամային շուկայում՝ այդ Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմերը արտաքին տնտեսական բոլոր տեսակի գործողությունների համար կպահպանեն միասնական արժույթային կուրսի ռեժիմ:

Վճարային համակարգի մասնակիցները կկիրառեն փոխանակային կուրս, որը որոշվում է Կողմերի արտարժութային շուկաներում պահանջարկով եւ առաջարկով:

Կողմերը կձգտեն համաձայնեցված միջոցներ իրականացնել ազգային արժույթների արժութային կուրսերի կայունության պահպանման համար:

Փոխանակային կուրսերի կարգավորման նպատակով կենտրոնական (ազգային) բանկերը ստեղծում եւ օգտագործում են կայունացնող հիմնադրամները ազատ փոխարկելի արժույթներում եւ թանկարժեք մետաղներում:

Կողմերը կապահովեն ոչ ռեզիդենտ բանկերի, ինչպես նաեւ Միջպետական բանկի մուտքը իրենց ներքին արժութային շուկաներ, իրենց ազգային օրենսդրություններին համապատասխան:

Կողմերի ազգային արժույթների փոխանակումը ֆիզիկական անձանց իրականացվում է առեւտրային բանկերի եւ այլ բանկային հաստատությունների կողմից՝ արժութային շուկայում ձեւավորվող փոխանակային կուրսով:

Կողմերը կապահովեն մյուս Կողմերի արժույթների փոխանակման ռեժիմի ազատականացումը ազգային արժույթով ոչ ռեզիդենտների հաշիվներին միջոցների մնացորդները:

Կենտրոնական (ազգային) բանկերը պատասխանատվություն չեն կրում Կողմերի առեւտրային բանկերի մոտ ծագող պարտավորությունների կարգավորման համար:

## ՀՈՂՎԱԾ 5

Արժութավճարային եւ վարկային հարաբերությունների, Կողմերի բազմակողմ հաշվարկավարկային հարաբերությունները շոշափող արժութային կանոնների մերձեցման եւ կատարելագործման, դրամավարկային եւ արժութային քաղաքականության համակարգման ձեւերի եւ մեթոդների զարգացման բնագավառում բազմակողմ համագործակցության կազմակերպմանը օժանդակելու նպատակով, Կողմերը կստեղծեն Միջպետական արժութային կոմիտե:

## ՀՈՂՎԱԾ 6

Վճարային համակարգի տեղեկատվական-տեխնիկական ապահովման համար կստեղծվեն Միջպետական բանկի եւ առեւտրային բանկերի ասոցիացիաների տվյալների տեղեկատվական-տեղեկատու բազաներ: Անհրաժեշտության դեպքում, վճարային համակարգի տեղեկատվական սպասարկման համար փակ բաժնետիրական ընկերության ձեւով, կստեղծվի միջազգային մասնագիտացված կազմակերպություն: Այդ կազմակերպության բաժնետոմսերի հսկող փաթեթը կպատկանի կենտրոնական (ազգային) բանկերին եւ իսկ մնացած բաժնետոմսերը կբաշխվեն առեւտրային բանկերի շրջանում:

## ՀՈՂՎԱԾ 7

Կողմերը կհամագործակցեն եւ համաձայնեցված միջոցներ կձեռնարկեն արժութային հսկողության հարցերում՝ ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ հիման վրա, որի առնչությամբ կհանձնարարեն իրենց համապատասխան գործադիր մարմիններին կնքելու անհրաժեշտ համաձայնագրեր:

## ՀՈՂՎԱԾ 8

Կողմերը անդրազգային ֆինանսաարդյունաբերական եւ բանկային խմբերի կայացման եւ զարգացման, արտադրության միջազգային մասնագիտացվածության եւ կոոպերացիայի ընդլայնման, գիտատեխնիկական եւ ներդրումային համագործակցության, փոխադարձ ապրանքաշրջանառության համար վարկաբանկային եւ արժութաֆինանսական բարենպաստ պայմաններ ապահովող միջոցառումներ կիրականացնեն:

Կողմերը կհանձնարարեն Միջպետական բանկին նպաստելու միջպետական նախագծերի վարկավորմանը եւ ֆինանսավորմանը՝ փոխգործակցելով Կողմերի առեւտրային բանկերի

Եւ միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների հետ:

#### ՀՈՂՎԱԾ 9

Կողմերը ակտիվացնում են փոխադարձ շփումները չվճարումների հիմնախնդիրների լուծման, ինչպես նաեւ բարտերային գործարքների ծավալների կրճատման համար՝ միջազգային տնտեսական շրջանառությունում մուրհակների, ինչպես նաեւ Միջպետական բանկի եւ այլ մասնագիտացված հաստատությունների միջոցով բազմակողմ քլիրինգի մեխանիզմի ներդրման գծով միջոցառումների հաշվին:

#### ՀՈՂՎԱԾ 10

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ/կամ կիրառման հետ կապված Կողմերի միջեւ ծագող ցանկացած վեճ կամ տարաձայնություն, ինչպես նաեւ սույն Համաձայնագրով կամ դրա հետ կապված Կողմերի իրավունքները եւ պարտավորությունները շոշափող այլ վեճերը կկարգավորվեն հետեւյալ կարգով.

շահագրգիռ Կողմերի միջեւ անմիջական խորհրդակցություններ անցկացնելու միջոցով,

հատուկ համաձայնեցնող ընթացակարգի շրջանակներում աշխատանքային խմբեր ստեղծելու միջոցով՝ վեճի նյութերի ուսումնասիրման եւ երաշխավորությունների մշակման համար,

միջազգային իրավունքով նախատեսված այլ ընթացակարգերի շրջանակներում:

Հաջորդ ընթացակարգին անցումը հնարավոր է Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, որոնց միջեւ ծագել են վիճելի հարցեր կամ տարաձայնություններ, կամ նրանցից մեկի պահանջով՝ ընթացակարգը սկսելու օրվանից վեց ամսվա ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում:

#### ՀՈՂՎԱԾ 11

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

#### ՀՈՂՎԱԾ 12

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության կողմից միանալու համար, որը ճանաչում է միանալու պահին գործող սույն Համաձայնագրի դրույթները եւ պատրաստակամություն է հայտնում կատարել դրանք լրիվ ծավալով:

Միացումը իրականացվում է միացող պետության հետ կնքվող առանձին համաձայնագրում սահմանվող պայմաններով եւ կարգով, ինչը նախապես համաձայնեցվում է եւ ենթակա է բոլոր Կողմերի հավանությանը՝ նրանց ներպետական ընթացակարգերին համապատասխան:

#### ՀՈՂՎԱԾ 13

Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի ազատ դուրս գալ Համաձայնագրի մասնակիցների կազմից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին: Ավանդապահը դրա մասին մեկամսյա ժամկետում ծանուցում է բոլոր Կողմերին:

Ցանկացած Կողմի կողմից սույն Համաձայնագրի դրույթների խախտման դեպքում, ինչը էական վնաս է հասցնում նրա նպատակների ձեռքբերմանը, մյուս Կողմերը իրավունք ունեն որոշում ընդունել այդ Կողմի նկատմամբ Համաձայնագրի կամ նրա առանձին դրույթների գործողության դադարեցման մասին, կամ իրավունք ունեն

որոշում ընդունել նրան Համաձայնագրի մասնակիցների կազմից բացառելու մասին:

Հնարավոր վեճերի, այդ թվում գույքային բնույթի, եւ տարաձայնությունների կարգավորման նպատակների համար, սույն Համաձայնագրի դրույթները շարունակում են գործել մասնակցությունը դադարեցրած Կողմի նկատմամբ՝ մինչ բոլոր պահանջների լրիվ կարգավորումը:

#### ՅՈՒՆԱԾ 14

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ այն ստորագրած Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Սույն Համաձայնագրի ավանդապահը Բելառուսի Հանրապետությունն է:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի հոկտեմբերի 21-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի Համաձայնագրի հաստատված պատճենը:

\* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի փետրվարի 12-ից: